



Հովհաննես Թումանյան

Գիրորը

1

Գյուղացի Համբոյի տունը կոիվ էր ընկել:

Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիրորին տանի քաղաք մի գործի տա, որ մարդ դառնա, աշխատանք անի: Կինը չէր համաձայնում:

- Չեմ ուզում, իմ քորփա Երեխին էն անիրավ աշխարքը մի զցիլ, չեմ ուզում,- լալիս էր կինը:

Բայց Համբոն չլսեց:

Մի խաղաղ առավոտ էր . մի տխուր առավոտ: Տանըցիք ու հարևանները եկան մինչև գյուղի ծերը, Գիրորի թշերը պաշեցին ու ճամփա դրին:

Քույրը՝ Զանին, լաց էր լինում, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից ձայն էր տալի . «Գիրո՛լ, Է՞՞ ո՞՞ ես զնում, հե՛՛ Գիրո՛լ»:

Գիրորը շուտ-շուտ ետ էր նայում: Տեսնում էր դեռ գյուղի ծերին կանգնած են նրանք, ու մայրը գոզնոցով սրբում է աշքերը: Դարձյալ հոր կողքով վազում կամ առաջն էր ընկնում: Մին էլ ետ նայեց . գյուղը ծածկվել էր բլուրի ետև:

Այնուհետև Գիրորը ետ էր ընկնում:

- Արի հա՛, Գիքոր ջան, արի հա՛, հասանք հա՛,- որդուն կանչելով զնում էր Համբոն, շալակին մի խուրջին, մեջը մի քանի հաց ու պանիր ու մի երկու դաստա թութուն:

Իրիկնապահին, երբ անց էին կենում սարերը, մի անգամ Էլ երևաց գյուղը հեռո՞ւ մշուշում:

- Ա՛յ, ապի, մեր տունն էն ա հա՛,- ցույց տվակ Գիքորը մատը մեկնելով դեպի գյուղը, թեև տունը իսկի չէր երևում, ու անցան:

Առաջին իրիկունը դոնախս ընկան մի գյուղում: Տանտերը Համբոյի հին ծանոթն էր:

Դեղին սամովարը թշում էր տախտի ծերին: Մի ջահել աղջիկ շրջակշրջվագնելով բաժակները լվանում ու թեյ էր շինում: Նա մի կարմիր սիրուն շոր ուներ հազին: Գիքորն էնտեղ մտքումը դրեց, որ երբ քաղաքում փող աշխատի, իրենց Զաննի համար մի էն տեսակ շոր դարկի:

Իրիկնահացից ետք տանտերն ու Համբոն թինկը տված, չիքուս քաշելով զրուց էին անում: Խոսեցին Գիքորի մասին: Տանտերը գովեց Համբոյին, որ չարչարվում էր որդուն մարդ շինի: Ճետո սկսեցին խոսել կովի վրա, հացի թանգության վրա, բայց Գիքորը շատ էր հոգնած, քունը տարավ:

Մյուս օրը քաղաք մտան: Գնացին ծերունի թավլաշու մոտ: Առավոտը բազարն իջան:

- Բիձա, Էդ երեխին ծառա ես տալո՞ւ,- խանութի ներսից հարցրեց մի վաճառական:

- Հրամանք ես,- ասակ Համբոն ու Գիքորին էն կողմը հրեց:

- Բեր ինձ տուր, ես կրոնեմ,- առաջարկեց վաճառականը:

Նրան ասում էին բազագ Արտեմ:

Համբոն քաղաքում Գիքորին ծառա տվակ քազազ Արտեմի տանը: Պայմանն էն էր, որ Գիքորը պետք է տունը մաքրեր, ամանները լվանար, ոտնամանները սրբեր, դուրանը բաժին տաներ ու էս տեսակ մանր ծառայություններ, մինչև մի տարի:

Մի տարուց ետք քազազը նրան պետք է տաներ դուրան, շիներ դուրանի «աշկերտ», ու էսպես Գիքորը պետք է բարձրանար:

- Հինգ տարի դեռ փող չեմ տալ,- ասակ քազազը պայմանը կապելիս:- Թե դրուստը կուզես, դեռ դու պետք է տաս, որ քու որդին բան է սովորելու: Ախար իսկի բան չգիտի . . .
- Որտեղից գիտենա, խազեին ջան,- պատասխանեց Համբոն,- որ գիտենար, Էլ ո՞ւր կբերեի, ես Էլ բերել եմ, որ բան սովորի . . .
- Կսովորի, ամեն բան կսովորի: Էնպես սովորի ո՞ր . . . Զեր կողմերից էն Նիկոլն ինչ է, որ իրեն համար դուրան ունի բաց արած, նա Էլ ինձ մոտ է մարդ դառել: Ամա վերջում մի ջուխտ չայի գդալ ու մի բանի բան գողացավ . . .
- ՉԵ՛, խազեին ջան, սա գողանալ չի: Որ Էդպես բան անի, կզամ կոնիցը կբռնեմ, Էն Քուոր կզցեմ:
- Հա՛, որ ձեռը հալալ Է՛ մարդ կդառնա:
- Իմ դարդն Էլ էն ա, աղա ջան, որ մարդ դառնա . լեզու սովորի, գրիլ-կարդալ սովորի, նստիլ-վերկենալ սովորի, մարդ ճանաչի, որ աշխարքումն ինձ նման խեղճ ու զուրկ շմնա . . . Ինքն Էլ աշքաբաց երեխա ա, մեր գեղական շկոլումն Էլ գրածանանչ ա Էլել, գրի սևն ու սիպտակը ջոկում ա: Ամա աղաշանքս էն ա, որ լավ մտիկ անեք, դարիք երեխա ա, քորփա ա . . .

Քազազը Համբոյին միամտացրեց ու դուրս գնաց՝ բարձր ձենով հրամայելով՝ «Չայ բերեք, հաց բերեք սրանց համար . . .»:

Հերուսակ ու որդի նստած էին բազագ Արտեմի խոհանոցում:

- Դե, հիմի դու զիտես, Գիքոր շան, տեսնեմ՝ ինչ տեսակ տղա ես դուրս գալի . . .
Հենց պետք է անես, որ . . . ես ի՞նչ զիտեմ . . . ո՞վ տեր աստոծ . . . - մոնչաց
Համբոն ու շիբուխը լցրեց:

Այնինչ Գիքորը շորս կողմն էր դիտում:

- Ապի, սրանք բուխարի շունե՞ն:

- Չե՛, սրանցը փեշն ա, ա՛յ էն ա փեշը . . .

- Կալ Էլ շունե՞ն:

- Սրանք քաղաքացի են, զեղացի հո շեն, որ կալ կալսեն: - Բա ո՞րտեղից են հաց
ուտում:

- Փողով առնում են ուտում: Հացն Էլ են փողով առնում, եղն Էլ, կաթն Էլ, մածոնն
Էլ, փետն Էլ, ջուրն Էլ . . .

- Վա՛ . . .

- Բա՛, սրան Թիֆլիս կասեն: Դու հալա դոշադ կաց, դեռ շատ բան կիմանաս:

- Ապի, սրանք ժամ ունե՞ն . . .

- Ունեն, բա՛ս, սրանք Էլ մեզ նման հայ քրիստոնյա են: Մտիկ արա, հա՛,
ձեռնաքաշություն շանես: Կարելի ա քեզ փորձելու համար փող վեր կզցեն,
մոտենաս ոչ: Թե վերցնես Էլ, տար ասա՝ «խանո՛ւմ, ես ի՞նչ փող ա, էստեղ վեր
ընկած էր . աղա՛, ես բանն էստեղ գտա», թե չէ . . .

- Էստեղ Էլ պրիստավ կա՞ որ . . .

- Կա, բա՛ս . . . Վախտ ու անվախտ դես-դեն շընկնես, ձեռդ ընկած փողը քոն ու
փուշ շանես, հազար ու մի պակասություն ունենք: Քեզ Էլ լավ պահի, զիշերները
բաց շըլես, մրսես ոչ . . . Մի-մին եկողի հետ զիր դարկի . . . - մերթ-մերթ շիբուխը

բերանից հանելով որդուն խրատում էր Համբոն: Այնինչ Գիքորը ննջում էր:

- Հացի կտորտանքն ու քարթուն կտան, կերակուրի թերմացքը կտան, շատ անգամ էլ իրենք կուտեն, քեզ տալ չեն, բան չկա, ծառայի կարգն է դա . . . Օրեր են, կմքնեն, անց կկենան . . .

Շարունակում էր հերն իր խրատը, բայց Գիքորը հորը թինկը տված քնել էր արդեն:

Էն երկու օրը նա էնքան բան էր տեսել, էս ու էն կողմը նայել, որ հոգնել էր բոլորովին:

Մրգով լիքը խանութները, դեղերի նման դարսած գույնզգույն շթերը, տեսակ-տեսակ խաղալիքները, ուսումնարան զնացող կամ դարձող երեխաների խմբերը, իրար ետևից սլացող կառքերը, ուղտերի շարքերը, կանանչի բարձած ավանակները, թարախները զիխներին կինտոները . . . Էս ամենի գոռոցն ու զնզոցը, աղմուկն ու աղաղակը իրար խառնված դժվժում էր նրա զլխում: Եվ նա հոգնել էր ու հորը թինկը տված քնել:

Էս ժամանակ բազազն ու իր կինը վիճում էին ներսը: Կինը տրտնջում էր, որ ծառան խամ էր, նոր սարիցն եկած, վայրենի, իսկ մարդն ուրախ էր, որ մի բանի տարով անվարձ ծառա էր գտել:

– Կսովորի, հո էդպես չի մնալ, – ասում էր նա կնոջը:

– Կսովորի, որդի, սիրտդ շուտ մի՛ բերի, – խնդրում էր բազազի պառավ մայրը:

Բայց տիկին Նատոն չէր համոզվում: Նա արտասվելով անիծում էր իր բախտը:

4

Գիքորը մենակ նստած էր բազագ Արտեմի խոհանոցում: Նա արդեն ծառայության մեջ էր:

Խազեինի հին գլխարկը մինչև ականջները կոխած գլուխը, հին ոտնամանները ոտներին, մի մավի բլուզ էլ հագին, էսպես ոտից գլուխ փոխված, նա նստած էր խոհանոցում ու միտք էր անում, թե ընչի եկավ իրենց գյուղից, որտեղ է ընկել, հիմի ինչ պետք է անի . . .

Ես ժամանակ ներս մտավ տիկին Նատոն:

Գիքորը տեղը նստած էր:

Տիկինը մի քան ասավ: Գիքորը լավ շլսեց, թե չհասկացավ:

– Քե՞զ չեմ ասում, տո արջի քոթոք:

Գիքորը շփոթվեց, քրտնեց. մին ուզեց հարցնի, թե ինչ է ասում, մին էլ սիրտ չարավ: Աղջիկ պարոնը բարկացած դուրս գնաց:

– Ը՞հ, հողեմ ձեր գլուխը, որ վայրենի եք ու գալիս եք մարդի գլխի խաթա դառնում . . . Ես քան եմ ասում, սա տեղիցն էլ ժաժ չի գալի, ձեն էլ չի հանում . . .

– Վերջացավ, – անցավ Գիքորի մտքովը: – Բայց ի՞նչ շուտ վերջացավ . . . ի՞նչ վատ վերջացավ . . . Հիմի ես ի՞նչ անեմ . . . հերս էլ գնաց . . .

Եվ ամեն քան նա վերջացած էր համարում, երբ իրեն-իրեն խոսելով ներս մտավ սև շորերով քարի պառավը, բազազի մերը: – Որ աղջիկ պարոնը ներս է գալի, տեղիցդ ընչի՞ չես կանգնում, որդի, – խրատում էր նա Գիքորին, – որ քան են հարցնում, ձեն հանի . . . ո՞նց կըլի էդպես . . .

Պառավին դեղի էին ասում:

Դեղին սովորեցնում էր Գիքորին, թե ինչ պետք է անի, ինչպես սամովարը զցի, ոտնամանները սրբի, չոտկը բռնի, ամանները լվանա . . .

Բացի պառավ դեղին, ամենքը նեղացնում էին նրան:

Բազազի «դուքանի, աշկերտներն» էլ շարունակ ծաղրում էին նրան, «քիքի» էին կանչում, քիթը քաշում, գլխին խփում, գլխարկը կոխում ականջները:

Բայց էս բոլորը տանելի բաներ էին:

Անտանելին էն էր, որ նա չէր կարողանում քաղցին դիմանա: Իրենց տանը, երբ սովում էր, գնում էր տաշտիցը հաց Եր առնում, կճուճիցը պանիր էր հանում, ուտելով գնում խաղալու կամ թե չէ՝ փեշն էր դնում, գնում հանդը: Երբ ուզում էր՝ մի ծառի տակի կամ աղբրի վրա նստում էր ուտում:

Հիմի էստեղ ուրիշ տեսակ էր: Ինչքան էլ սոված լիներ պետք է սպասեր մինչև ճաշի ժամանակը զար, էն էլ ամենքն ուտեին, ետո ինքը: Եղ անիծած ժամանակն էլ էնքան ուշ էր զալի, որ խեղճի սիրտը քամ էր ընկնում, թրթում:

Մին, երկու, տասը համբերելուց ետք նա սկսեց չորս կողմն աչք ածել խոհանոցում, թե արդյոք մի բան չի գտնիլ ուտելու, որ սիրտը կանգնեցնի, մինչև ճաշի ժամանակը զա:

Սկզբում ինչ գտնում էր՝ չոր հացի փշրանք, կրծած ոսկոր թե ուրիշ բան, զցում էր բերանը: Մի քիչ ետո մտածեց խոհանոցի պահարանները որոնել: Ապա թե սովորեց կերակուրի պղնձից կիսեփի մսի կտոր դուրս քաշել . . .

Բայց եթե նկատեի՞ն . . .

Ինչ վատ բան դուրս կզա՞ր . . .

Եթե նկատեի՞ն . . .

Հապա ի՞նչ անես . . .

Թողնե՞ս, փախչե՞ս . . .

Եվ Գիքորն սկսեց մտածել փախչելու մասին: Բայց ո՞նց փախչես, ո՞ր կողմը փախչես, մենա՛կ, ճամփա չգիտես, մարդ չես ճանաչում . . . իսկ հերը . . .

Էնքան չարշարվեց, խոսեց, խրատեց՝ «Օրեր են, որդի, կմթնեն, անց կկենան . . .»:

Եվ ահա Գիքորի զլխում հնչում է հոր խանձված ձենը՝ «Օրեր են, կմթնեն, անց կկենա՞ն . . . անց կկենա՞ն . . .»:

5

Զանգը տվին:

Գիքորը վեր թռավ: Ասել էին, թե երբ զանգը տալիս են, գնա տեսնի՝ ով է, ինչ է ուզում: Նա դուրս եկավ, պատշգամբից նայեց, տեսավ մի պարոն ու մի քանի տիկին դուան առաջը կանգնած:

– Եղ ո՞վ եք, հե՛յ, – ձայն տվավ վերևից:

Ներքսից վերև նայեցին:

Տիկինները ծիծաղեցին, իսկ պարոնը ակնոցներն ուղղելով, հարցրեց.

– Աղջիկ պարոնը տա՞նն է:

– Ի՞նչ եք անում, – հարցրեց Գիքորը:

Ներքև ծիծաղն ավելի սաստկացավ:

– Քեզ հարզնում են՝ տա՞նն է, թե չէ: բարկացավ պարոնը:

– Բան ունե՞ք:

Էս աղմուկի վրա տիկինը դուրս եկավ:

– Քրքրվես դու, գնա դուռը բաց արա, շո՛տ, – ճշաց ու սկսեց անիծել Գիքորին և իր ամուսնուն: Բայց շուտով հյուրերն երևացին, և նա ժպտալով դիմավորեց:

– Ա՛, բարև, բարև . . . Էս ո՞ր խաչիցն էք, ի՞նչպես է, որ մտաքերեցիք . . .

- Էս ո՞րտեղից եք գտել, – ոտից գլուխը Գիքորին չափելով, հարցրեց պարոնը, իսկ տիկինները շարունակ ծիծաղում էին:
 - Ի՞նչ եք նախանձում, կուզեք ձեզ տանք, – կատակի տվավ տիկինն, ու հյուրերը խնդալով ներս մտան: Գիքորին շտապով մի տեղ ուղարկեց ու նրանց ետևից իսկույն ներս մտավ և տիկին Նատոն:
- Իրար առողջություն հարցնելուց ետք հյուրերն սկսեցին պատմել իրենց ներս մտնելու պատմությունը, և դուրս եկավ մի ահազին պատմություն:
- Օ՛ֆ, սիրտս մաշել է, – զանգատվում էր տիկին Նատոն, – թե իմանաք՝ ինչ ես քաշում ես դրա ձեռիցը . . . Ասում եմ՝ դուրս անենք կորչի, բայց դե Արտեմի բնավորությունը գիտեք, Ելի, ասում է՝ մեղք է, գեղացի երեխա է, թող կենա, մի կտոր հաց է, ուսի, կսովորի . . . Ախր էլ ե՞րբ . . . սիրտս մաշեց . . .
 - Օ՛հ, օ՛հ, օ՛հ, եղ ծառաների քանն էլ մի՛ ասի, – էս ու էն կողմից սկսեցին բողոքել տիկին հյուրերը:

- Մի կես ժամ խոսեցին դեսից-դենից, ծառաներից, քաղաքի նորություններից: Ճենց եղ խոսակցության ժամանակ ներս մտավ քրտնած Գիքորը:
- Աղջիկ պարոն, միրզը բերի:
 - Հա, լավ, գնա՛, – իրամայեց տիկինը կարմրելով, իսկ հյուրերն սկսեցին ծիծաղել:
 - Աղջիկ պարոն, խազեինն ասում էր՝ քալը քանգ ա, հարկավոր չի . . .

Էս խոսքերի վրա հյուրերից ոմանք պոռթկացին, ու թաշկինակով բերաններին հուպ տվին, ոմանք էլ տանտիկնոշ խայտառակությունը ծածկելու համար վկայեցին, թե իրավ քալը շատ քանգ է, էս ժամանակին ով է քալն առնում: Ապա սկսեցին հանդիմանել, թե ի՞նչ հարկավոր է միրզը, ին ուտելու համար չեն եկել, ի՞նչ են նեղություն քաշում . . .

Տանտիկինը, մինչև ականջակոթերը կարմրած, աշխատում էր սի կերպ եղածն ուղղի:

- Ով գիտի ինչ է ասել, չի հասկացել էս հիմարը:
- Ով սուտ ասի՝ գետինը մտնի, – երդվեց Գիքորը, ու ամեն բան լրացավ:

6

Հյուրերին ճամփու դնելուց ետք տիկին Նատոն բարկացած, բարձր-բարձր խոսելով վեր էր քաղում մրգի սեղանը: Նա հայինում էր Գիքորին, մեկ-մեկ թվում էր, թե ինչեր է անում նա, անիծում էր իր բախտը, իր ամուսնուն:

- Քա՛, խամ է, որդի, կսովորի, որդի . . . ինչի ես սիրտդ շուռ բերում . . . Ախ աստոծ, ի՞նչի չես հոգես առնում, – հառաշում էր պառավ դեղին:
- Երանի մի իմանամ՝ մարդու սրտի էս նեղացած ժամանակը դու ինչ ես խոսում . . . Խամ է, դե զնացեք դուք շինեցեք, ես հո ձեր գերին չեմ, – ձենն ավելի բարձրացնելով պատասխանեց պառավի հարսը ու շարունակեց իր տրտունջն ու անեծքը, մինչև ամուսինը տուն գար:

Ամուսնու ոտնաձայնը որ լսեց՝ սկսեց արտասավել, ավելի բարձր խոսել ու ամանները իրար զլխով տալ:

- Ասում եմ՝ դուրս արա կորչի, ես ծառայի բանն էլ կանեմ, թե խնայում եմ՝ փող տաս, կարգին ծառա բոնես . . . Լավ է մարդ ծառայի տեղ էլ քաշ գա, քան թե ամեն օր էսենց սիրտը շուռ բերի . . . Իմ թշնամին հո չե՞ս . . .
- Ի՞նչ է պատահել, – հարցրեց բազազը՝ տան մեջտեղը կանգնելով:
- Ի՞նչ պետք է պատահի . Էս էր մնացել, որ խալխի մոտ էլ մարդ գետինը մտնի, էս էլ արիր . Էլ ի՞նչ պատահի, – վրա թուավ տիկինը ու պատմեց բալի պատմությունը:
- Վա՛հ, – բացականչեց բազազը:

– ԱՇԽ աստո՞ծ, – հառաշում էր բարի պառավը՝ դեսուդեն ընկնելով:

Բազազը Գիքորին ձեն տվեց:

ԹՄՎԹՄՎԻԱԳՆԵԼՈՎ Գիքորը ներս ընկավ:

– Մոտիկ արի, – կանչեց բազազը:

Գիքորը վախեց նրա գույնից, մնաց տեղը կանգնած:

– Քեզ ասում եմ՝ մոտիկ արի . . .

Գիքորն էս անգամ շարժվեց, բայց դարձյալ մնաց տեղը կանգնած:

– Sn', արջի քոթոք, ես քեզ ասում եմ՝ աղջիկ պարոնին ասա, դու գալիս ես դոնախներին ասում, թե բալը թանգ է՞ր . . .

– Ես... ես... աղջիկ պարոնին... – ուզում Էր արդարանա Գիքորը, բայց խոսքը քերանում՝ ապտակը հասավ, աչքերը կայծակին տվին, գլուխը դիպավ կողքի պատովն ու վեր ընկավ: Ճենց ընկած տեղն սկսեց բազազը ոտքել, անդադար կրկնելով. «Բալը թանգ էր, հը՞... բալը թանգ Էր, հը՞ . . .»:

Պառավ դեղին դողդողալով մեջ ընկավ, աշխատում Էր ետ քաշի կատաղած որդուն, աղջիկ պարոնն էլ եկավ, երեխաներն էլ սկսեցին ճշալ, բազազը ետ կանգնեց հևալով ու կրկնելով. «Բալը թանգ Էր, հը՞», աչքերը միշտ չուծ անկյունում կծկված Գիքորի վրա, որ դողալով ու ցավագին մրմնջում էր.

– Վա՛յ, նանի ջան, վա՛յ . . . վա՛յ, նանի ջան, վա՛յ . . .

7

Տեսան տանը չի կարողանում ծառայի՝ խանութ տարան Գիքորին: Էնտեղ ապրանք պետք է տային մուշտարիների հետ տանելու, չիթ պետք է ծալեր, խանութը սրբեր, իսկ պարապ ժամանակը մուշտարի կանչեր:

Եվ ահա Գիքորը հաց է տանում խանութը: Կերակրամանը ձեռքին, մաշված ու տժգոյն, մեծ-մեծ ոտնամանները քաշ տալով անց է կենում կամուրջով: Նայեց ներքև: Քարվանսարանների բարձր պատերին զարկելով ծառս էր լինում Քուոր, ոլորվում, պտտվում ու ճնշվելով խեղդվում, խոլ թշշում կամուրջի տակին:

Ափից մոտիկ պտտում էր մի կանաչ նավակ: Երկու հոգի կային նրա մեջ. մինը ուղկան Էր ձգում, մյուսը նավն էր կառավարում:

- ԱՇ հիմի կհանի, – ասավ Գիքորն ու կանգնած նայում էր ձկնորսներին:
Ուղկանը դատարկ դուրս եկավ:
- Ես մինն իմ բախտիցը, – ասավ Գիքորն ուղկանը ձգելիս: Գիքորի բախտը դատարկ դուրս եկավ:
- Ես մինն Էլ մեր Չաննի բախտիցը:

Ես Էլ դատարկ դուրս եկավ: – Ես մինն Էլ Գալոյի բախտիցը:

Գալոն Էլ էր անբախտ:

- Ես մինն Էլ բաս . . .

Բայց Էղ ժամանակ մոտիկ քարվանսարի դռանը աղմուկ բարձրացավ: Մի պարսիկ կապիկ էր պար ածում երգելով.

ԱՇ արի, արի, մեյմուն,
Ճիպոտը սարի, մեյմուն,
Պառավի պես կուզի-կուզ,
Չահելի պես պարի, մեյմուն:

Ժողովուրդը հավաքվել էր գլխին ու վազում էին չորս կողմից: Գիքորն Էլ վազեց: Աշխատեց կանգնած ժողովրդի արանքը մտնի, առաջ անցնի, չկարողացավ: Վիզը ձգեց, պճեղների վրա կանգնեց ու ճգնում էր անպատճառ տեսնի, թե ինչ է կատարվում մեջտեղը:

– Ի՞նչ ես ներս խցկվում, տո լածիրակ, զնաքու բանին,— ասավ մի կինտո ու զարկեց գլխին:

Գիքորը հանկարծ սթափվեց ու վագեց դեպի խանութը:

8

Իրիկունը Գիքորը կուշ էր եկել խոհանոցում: Դեռ արտասուրը չէր ցամաքել նրա երեսին, դեռ այրվում էին խազեինի ապտակների տեղերը, դեռ նոր էր լոել աղջիկ պարոնի ձենը— շվշագնելով ներս մտավ Վասոն, բազազի աշկերտը: Գիքորին նկատելով նա խսկույն կանգ առավ ու, մասխարա դեմքին լրջություն տալով, սպառնալի հարցրեց.

– Կլուբումն ուշացա՞ր, տո արջի քոթոք, թե՞ զուբերնատի մոտ վոազ գործ ունեիր . . .

Գիքորը գլուխը չէր բարձրացնում:

– Ասա մի տեսնեմ, Է, տո՞ . . .

Գիքորը լուռ էր:

– Զե՞ս իմանում, տո՞, որտե՞ղ էիր, Է՞, որ էսօր ինձ քաղցած սպանեցիր, որ մեռնեի՝ հետո՞ . . .

Էսպես խոսելով կամաց—կամաց մոտեցավ, մի քիչ կանգնեց ու հանկարծ զարկեց Գիքորի գլխին: Գիքորը երկու ձեռքով գլուխը պաշտպանեց ու սեղմվեց պատին: Վասոն պատրաստվում էր մի ուրիշ ձևի հարված Էլ հասցնելու, բայց դուրսը բարձրացավ խազեինի ձայնը: Գալիս էր:

– Աքա տես հիմի քեզ ի՞նչ է անում,— սպառնաց Վասոն:

«Ճիմի ինձ կսպանեն»,— անցավ Գիքորի մտքովը, ու խեղճի հոգին տապ արավ:

Խազեինը արդեն բավականին ծեծել էր խանութում, այժմ միայն իրամայեց հաց չտան, որ իմանա, թե ինչ բան է քաղցածությունը:

Վտանգն անցավ:

Գիքորը հանգստացավ, թեև լսում էր աղջիկ պարոնի ձայնը, որ ճշում էր. «Այս ընչի՞ ես պահում, դուրս արա կորչի, Ելի, դուրս արա կորչի’ . . . »:

9

Գիքորը կծկվեց վերմակի մեջ, զլուխը կոխեց տակը, տապ արավ:

«Լուսնյակ զիշեր, բոլորովին քուն չունեմ,

Ինձ տեսնողը կարծում է, թե տուն չունեմ, վա՛յ, տուն չունե՞մ . . . » իր երգը երգելով Վասոն հաց էր ուսում: Գիքորը վերմակի տակից երբեմն զգույշ ծիկրակում, թարուն նայում էր նրան, կրկին աչքերը ծածկում: Նա էն օրը հաց չէր դրել բերանը, ծեծվել ու լաց էր եղել, այժմ էլ քաղցած պառկեց, ու քունը չէր տանում:

– Հը՞, ո՞նց ա, սոված քունդ չի՞ տանում, հա՛, Էդպե՞ս . . . – նկատեց շարաճճի Վասոն ու մի կտոր հաց ու պանիր տվավ Գիքորին, – Դե, առ, տեղի տակին թարուն կեր, խազեինը չիմանա:

Գիքորը հափշտակեց հաց ու պանիրը, զլուխը կոխեց տեղի տակը, թարուն ուսում էր ու մտածում: Մտածում էր իրենց տան վրա, Էն օրերի վրա, երբ ազատ խաղում էր հանդերում ու լիասիրտ հաց ուսում, մտածում էր Էն երեկոների վրա, երբ հերն ու մերը կովում էին իրեն քաղաք բերելու համար . . . մերը լաց էր լինում, չէր ուզում . . .

– ԱՇԽ, նանի ջան, ի՞նչ լավ էր սիրտդ իմացել, – հառաչում էր Գիքորը տեղի տակին ու հաց ու պանիրն ուսում՝ ականջը սրած, թե խազեինը ին չի գալի:

Իսկ առավոտը կանգնած էր խանութի դռանը:

10

Խանութի դոանը կանգնած ձեն էր տալի Գիքորը, մուշտարի էր կանչում ու բարձր ձենով գովում իրենց ապրանքը:

– Կանչի, Է՛, տ’ն . ի’նչ ես մնջվել, մնացել կանգնած: Բերանումդ հո ջուր չկա՞:

Ե՛ստի համեցե՛ք, Ե՛ստի համեցե՛ք . . . կանչում էր Գիքորը:

Ներսը ծիծաղից թուլանում էին:

Նրան սովորեցրել էին, որ մուշտարի քաշի դեայի իրենց խանութը: Եվ նա հաճախ քոնում էր ես կամ էն անցորդի փեշից, կոպիտ ու համառ սկսում էր քաշել դեայի խանութը ու բաց չէր թողնում, մինչև որ մարդը դուրս էր գալի համբերությունից: Գալիս էր դարձյալ իր տեղը կանգնում ու կանչում:

Ամառվա տոռթ օրերին, խանութի դոանը երկար կանգնելուց հոգնած, նա երբեմն նստած քնում էր խանութի առաջին դարսած շթերի վրա:

Եղ ժամանակ շարաճի ընկերները կամ հարևանները քոնոթի էին քոնում նրա քթի տակը:

Նա փոշտալով վեր էր թոշում:

Շոգից թմրած վաճառականները զվարճանում էին: Իսկ խազեինը կուշտ ծիծաղելուց հետո ձայն էր տալի .

– Քնում ե՞ս, տո, արջի քոթոթ, կանչի, Է՛ . . .

– Ե՛ստի համեցե՛ք, Ե՛ստի համեցե՛ք, – ձեն էր տալի Գիքորը:

11

Մի օր Էլ Գիքորը երբ մուշտարի էր կանչում, դիմացից երկու զյուղացի դուրս եկան: Նա վազեց, փաթաթվեց զյուղացիներին: – Ա՛յ տղա, իսկի ճանաչեցի ոչ, ես ի’նչ քան էր, – զարմացած բացականչեց զյուղացիներից մինը ու դարձավ ընկերին.

- Բաղո, դու կճանաչեի՞ր . . .
- Ես աշքերիցը կճանաչեի, – պարծեցավ ընկերը:
- Ճշմարիտ որ Գիքորը շատ էր փոխվել, շատ էր մաշվել: Ինքն էլ էր փոխվել, շորերն էլ: Դժար էր ճանաչելը:
- ԱՇ տղա, ես կարգին մարդ ա դառել . . . հալա սրա շորերին, սրա շնորհին . . . – հիանում էին զյուղացիները:
- Համբոյի հողը մեր գլխին, տես, նա իր տղին ո՞րտեղ հասցեց, մեր տղերը էնտեղ խոզ են արածացնում . . .
- Այնինչ Գիքորը իրար ետևից հարցնում էր.**
- Իմ մերը ո՞նց ա . . . մեր երեխերը ո՞նց են . . . իմ հերն ընչի՞ չեկավ . . . մեր կովը ծնել ա, թե՛ չէ . . . մեր գեղումն ո՞վ ա մեռել . . .
- Ամենն էլ լավ են, շատ բարով կանեն, – պատասխանեցին զյուղացիք: – Են ա Սուրբանց Ղուկասը մեռավ, մին էլ Պուճուրանց պառավը, մնացածը լավ են:
- Բա իմ հերն ընչի՞ չի զալի:
- Քու հերը լավ ուզում ա, ամա ո՞նց զա: Ինքը մենակ մի մարդ ա, սաղ տան ջափեն վրեն . . .
- Բա բան չեն դարգե՞լ . . .
- Ինչ ունեն, որ ինչ դարգեն, դու ձեր տան բանը գիտես ո՞չ: Ես տարի էլ հացը բարակ էր, խեղճ հերդ զոռով ծերը ծերին ա հասցնում: Նրանից ի՞նչ ես ուզում: Թե ունիս, դու դարգի . հրեն խարջ են ուզում – ձեռին զոռշ չունի:
- Հո մեր տանիցը օքմի չի՞ հիվանդացել:
- Չէ՛, են ա ձեր Ծաղիկ կովը Միրզանց զոմի փլեկովը ներքև ընկավ, սատկեց:

– Ծաղիկը սատկե՞ց . . .

– Խեղճ մերդ էնքան լաց էլավ՝ աչքերն ուռան:

Էս ասելով գյուղացիներից մինք մի նամակ հանեց տվավ Գիքորին ու ասավ.

– Հիմի ի՞նչ ես ասում . մենք էլ քեզ տեսնիլ չենք, գնալու ենք . թե մորդ կամ քվորդ համար բան ես դարգելու, տուր տանենք: – Ո՞րտեղից բան դարգեմ, դեռ փող չեմ ստանում . . . ամա . . .

– Ամա ի՞նչ . . .

– Ուզում եմ ես էլ զամ ձեզ հետ: Համ մեր գեղին, համ մերոնց կարոտել եմ, համ էլ . . .

– Վա՛, վա՛յ, մենք հենց իմացանք մարդ ես դառել, խելոքացել ես . . . Եդ տեսակ բան կասե՞ն: Էստեղ քեզ համար աղավարի ապրում ես – շորերդ բազա, ոտն ու ձեռդ իստակ . . . Մենք ասում ենք մեր երեխանցն էլ տեղ անես՝ քերենք, դու էդ ի՞նչ ես ասում: Էն որ ասել են՝ «Խոզի գլուխը դրին խալիչին, գլորվեց ետ ցեխն ընկավ», հալալ քեզ համար են ասել:

Էսպես հանդիմանեցին գյուղացիները, խրատեցին, մնաս բարով ասին ու գնացին:

Նրանց գնալուց ետք Գիքորն իր անկյունը քաշվեց ու բաց արավ հոր նամակը:

«Իմ սիրելի որդի Գիքոր ջան:

Ի քաղաքն Թիֆլիս:

Մենք ողջ և առողջ ենք, միայն քու առողջութինն ենք ուզում, ամեն: Քեզ շատ կարոտով բարով են անում ապին, նանք, Զանին, Մոսին, Միկիչը, Գալոն, ամեն: Մեր սիրելի որդի Գիքոր . ահա իմացած լինես, որ տեղներս շատ նեղ ա, և խարջը սաստիկ ուզում են, և փող չենք ճարում, և նանն ու Զանին տկլոր են, և տեղներս շատ նեղ ա: Գիքոր ջան, մի քանի մանեք փող դարգի և մի զիր դարգի

քու որպիսութենիցը: Եվ իմացած ըլես, որ Ծաղիկը սատկեց, և նանն ու Զանին տկլոր են»:

Նամակը կարդաց ու տեղը կանգնած միտք էր անում Գիքորը, դարդ էր անում իրանց տան համար: Սիրտը էրում էին նամակի տողերը:

- Նանն ու Զանին տկլոր են . . . Տեղներս նեղ ա . . .
- Կանչի, Է՛, սո՞ն, ի՞նչ ես վերացել, ուշքդ հետները զնա՞ց . . . – ձեն տվին ներսից:
- Է՛ստի համեցե՛ք, Է՛ստի համեցե՛ք, – կանչում էր Գիքորը խանութի դռանը կանգնած:

12

Զմեռը եկավ: Սառն աղմուկով ձյունախառն բուքը թոշում է քաղաքի վըրով: Փողոցներում սուրում, սուլում, հոսան է անում: Վզզալով մտնում է անկյունները, աղքատի ու տկլորի է ման զալի, պանդուխտ ու անտեր երեխա է որոնում:

Ահա գտավ Գիքորին:

Մի քարակ բլուզ հազին, խանութի դռանը կանգնած ձեն էր տալի նա .

- Էստի համեցե՛ք, Է՛ստի համեցե՛ք . . .
- Հրե՛սս . . . – շարախինդ սուլելով ցուրտը, աներևույթ թրի նման, զարկեց անցավ ոսկորները: Գիքորը դողաց:

Առանց ին էլ նա շատ էր մաշված, էղքանն էլ հերիք էր նրան: Ու անկողին ընկավ:

13

Հիվանդ պառկած էր Գիքորը քազազ Արտեմի խոհանոցում:

Պառավ դեղին օրը մի քանի անգամ ներս էր մտնում՝ իրեն-իրեն խոսելով:

– Ի՞նչ կուզես, որդի՛, Գիքո՛ր:

– Չո՛ւ . . .

Դեղին ջուր էր տալի: Հիվանդը դողդոջուն ձեռներով բռնում, ազահ խմում էր ու կրկին ուզում:

– Ես սիրտս հովացնում չի, դե՛ղի . . . ես մեր աղբրի սառը ջրիցն եմ ուզում, դե՛ղի . . . ես մեր տունն եմ գնում . . . ես իմ նանին եմ ուզում . . .

Բազազ Արտեմը ցավի մեջ էր ընկել: Նա դես-դեն ընկավ, նրանց կողմերից մարդ գտավ, ապապրեց, որ Համբոն գա, իսկ Գիքորին տարավ քաղաքային հիվանդանոցը:

Եստեղ շատ հիվանդներ կային շարքերով պառկած: Տխուր տնքում էին ու օճորքին նայում անզոր հայացքներով:

Գիքորին էլ պառկեցրին նրանց շարքում:

Եստեղ գտավ նրան հայրը: – Եղ ի՞նչ ես Էլել, Գիքոր ջան, – մղկտալով վրա ընկավ Համբոն:

Գիքորը տաքության մեջ շիմացավ հոր գալը:

– Գի՛քոր ջան, բա եկել եմ, Է՛, Գիքոր ջան . . . ես քու ապին եմ, Է՛ . . .

Հիվանդը ոչինչ չհասկացավ: Նա զառանցում էր ու զառանցանքների մեջ կանչում էր. «Միկի՛՛, Զանի՛՛, ապի՛՛, նանի՛ . . . »:

– Եստեղ եմ, Գի՛քոր ջան, նանք դարգել ա, որ քեզ տանեմ մեր տունը . . . գալիս չե՞ս . . . Միկիչն ու Զանին իրեն կտերը կանգնած քեզ ճամփա են պահում: Ի՞նչ ես ասում, դե խոսա, Է, Գիքոր ջան . . .

– Ե՛ստի համեցե՛ք, Ե՛ստի համեցե՛ք, – բացականչեց հիվանդը, զանազան անկապ, կցկտուր խոսքեր ասավ ու ծիծաղում էր տաքության մեջ:

Մի երկու օրից ետք Համբոն գնում էր իրենց գյուղը:

Նա թաղել էր Գիքորին ու գնում էր: Կոան տակին տանում էր շորերը, որ մերը լաց լինի վրեն: Շորերի գրպաններում մի քուոր փայլուն կոճակներ, նախշուն թղթեր, չքի կտորներ ու մի քանի քորոց զտան: Էն էլ, երևի, քրոջ Զաննի համար էր հավաքել ու պահել . . .

Գնում էր Համբոն ու մտածում: Շատ ժամանակ չէր անցել, որ էղ միևնույն ճամփով քաղաք եկավ իր Գիքորի հետ:

Ահա Էնտեղ էր, որ ասավ.

– Ապի, ոտներս ցավում են . . .

Եվ ահա էն ծառը, որի տակ նստեցին հանգստանալու . . .

Ահա Էնտեղ էր, որ ասավ.

– Ապի, ծարավ եմ . . .

Ահա էն աղբյուրն էլ, որ շուր խմեցին . . .

Ամենը, ամենը կան, մենակ նա չկա . . .

Մյուս օրը, երբ Համբոն անցնում էր լեռները՝ հեռվո՞ւմ երևաց իրենց գյուղը:

Գյուղից դուրս կանգնած սպասում էին նանը, Զանին, Միկիշը, Մոսին, իսկ փոքրիկ Գալոն մոր գրկից կանչում էր .

– Ալի՛, ալի՛, հե՛՛, Գիքոլ . . .